ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՑՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002, Երևան,
Ղազար Փարպեցի 9բ
Հեռ.՝ +374 10 53 76 62; 53 35 41; 53 00 67
Հեռապատճեն՝ +374 10 53 56 61
Էլ. փոստ՝ meo@ypc.am

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի փորձագիտական եզրակացությունը

Հատուկ քննչական ծառայության պետի տեղակալ Արմեն Նադիրյանի՝ «Առավոտ» թերթին տված հարցազրույցի կապակցությամբ փաստաբան Լուսինե Հակոբյանի բողոքի վերաբերյալ

Դիտորդ մարմնի կազմը՝

Արամ Աբրահամյան
Գեղամ Բաղդասարյան
Լևոն Բարսեղյան
Մեսրոպ Հարությունյան
Արա Ղազարյան
Գեղամ Մանուկյան
Աշոտ Մելիքյան
Էմանուիլ Մկրտչյան
Մեսրոպ Մովսեսյան
Գնել Նալբանդյան
Բորիս Նավասարդյան
Նունե Սարգսյան
Օլգա Սաֆարյան
Գեղամ Վարդանյան

2013 թվականի ապրիլի 17-ին ԶԼՄ-ների էթիկայի դիտորդ մարմին էր դիմել քաղաքացի Նարինե Իսմայիլիի ներկայացուցիչ Լուսինե Հակոբյանը: Վերջինիս դիմումը վերաբերում էր մարտի 29-ին www.aravot.am կայքում և «Առավոտ» թերթում հրապարակված լրագրող Ռուզան Մինասյանի հարցազրույցին ՀՀ հատուկ քննչական ծառայության /հետայսու՝ ՀՔԾ/ պետի տեղակալ Արմեն Նադիրյանի հետ «ԿԸՀ են ուղարկվել անձնական բնույթի տեսագրություններ» վերտառությամբ: Մասնավորապես, Լուսինե Հակոբյանը վիճարկում է հրապարակման մեջ տեղ գտած այն հատվածը, որը պարունակում է անձնական տեղեկություններ Նարինե Իսմայիլի մասին:

Բողոքում Նարինե Իսմայիլի ներկայացուցիչները նշում են. «Նամակով դիմել էինք «Առավոտ» օրաթերթի խմբագրին՝ խնդրելով կայքից հանել անձնական բնույթի տեղեկություններ պարունակող հատվածը: Բողոքարկող կողմը պնդում է. «Գտնում ենք, որ ՀՔԾ-ի պետի տեղակալ Արմեն Նադիրյանի հարցազրույցի մեզ մտահոգող հատվածը հրապարակելով «Առավոտ» օրաթերթի լրագրող Ռուզան Մինասյանը և պատասխանատու խմբագրակազմը խախտել են Նարինե Իսմայիլիի անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը»: Ելնելով, վերոնշյալ փաստերից, Նարինե Իսմայիլի ներկայացուցիչները իրենց դիմումում խնդրում են ԴՄ-ին եզրակացություն տալ սույն վեճի առարկա դարձած հոդվածի վերաբերյալ:

Քննարկելով սույն բողոքը ս.թ. մայիսի 8-ին կայացած նիստին՝ Դիտորդ մարմինը եկավ հետևյալ եզրահանգման.

1. Հրապարակման թեման, որն առնչվում է 2013 թվականի

փետրվարին տեղի ունեցած ՀՀ նախագահական ընտրություններում հնարավոր խախտումներին, բնականաբար հանրային հետաքրքրություն է ներկայացնում նդրա տարածումը անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակության համար: Հետևաբար, նմանատիպ տեղեկատվություն տարածող ԶԼՄ-ն կարող է օգտվել խոսքի ազատության պաշտպանության առավել լայն շրջանակներից:

Միևնույն ժամանակ, եթե ընդհանուր առմամբ հարցազրույցի թեման ներկայացնում է հանրային հետաքրքրություն, ապա նույն կերպ չի կարող դիտարկվել լրագրողի կողմից հարցազրույց տվող անձի վերոհիշյալ բողոքի առարկա դարձած արտահայտությունը: Թեմայի լուսաբանման տեսակետից հարցազրույցի նշված մասի մեջբերման որևէ անհրաժեշտություն չկար, և դրա բացակայության դեպքում հրապարակման նշանակությունը ոչ մի կերպ չէր տուժի: Բողոքի առարկա դրվագը կարող է դիտարկվել որպես «հանրային հետաքրքրասիրությունը», բայց ոչ «հանրային հետաքրքրությունը» բավարարող:

2. Գնահատելով լրագրողի և խմբագրության աշխատանքը Դիտորդ մարմինը արձանագրում է, որ տվյալ դեպքում, հակասության մեջ են մտնում հարցազրույց տվող ՀՀ ՀՔԾ պետի տեղակալ Արմեն Նադիրյանի՝ նյութի համահեղինակի, իր խոսքերի ամբողջական և համարժեք վերարտադրման հնարավորությունից օգտվելու իրավունքը, մի կողմից, և Նարինե Իսմայիլի անձնական կյանքի նկատմամբ հարգանքը, մյուս կողմից:

Ելնելով լրագրողական էթիկայի ընդհանուր կանոններից, և ԶԼՄ-ների ներկայացուցիչների վարքականոնի ընդհանուր էությունից՝ ցանկալի կլիներ, որ լրագրողը խուսափեր վերոհիշյալ արտահայտության տպագրումից, մանավանդ, որ տեղեկատվության արժեքը դրանից չէր նվազի: Հաշվի առնելով հարցազրույց տվողի մասնագիտական իրազեկվածությունը, նրա հաղորդած ինֆորմացիայի նշանակությունը, և փաստերի մասնակի վերարտադրման դեպքում դրանց ոչ համարժեք ներկայացնելու վտանգը, լրագրողից պետք էր ակնկալել վիճարկվող արտահայտության հեռացումը Արմեն Նադիրյանի համաձայնությամբ:

3. Դիտորդ մարմինը գտնում է, որ լրագրողն իր հոդվածում ամբողջությամբ հրապարակել է երրորդ անձի կողմից տրված տեղեկատվություն, հետևաբար նրա կողմից ուղղակիորեն չի խախտվել ԶԼՄ-ների ներկայացուցիչների վարքականոնի որևէ կոնկրետ դրույթ, այդ թվում, բողոքարկող կողմի մատնանշած 4.1. դրույթը, որը կոչ է անում. «հարգել և պաշտպանել մարդկանց անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը. հասարակական անհրաժեշտությամբ կարող է արդարացվել միայն պաշտոնատար անձանց, հասարակական գործիչների, իշխանության կամ հասարակական ուշադրության ձգտող մարդկանց անձնական կյանքին միջամտությունը» և 4.2. դրույթը, համաձայն որի, «այն դեպքում, երբ խոսքի ազատությունը հակասության մեջ է մտնում

մարդու մյուս հիմնարար իրավունքների հետ, լրատվամիջոցն ինքնուրույն է վճռում, թե ինչին տալ նախապատվությունը և պատասխանատվություն է կրում իր վճռի համար»:

4. Այն փաստը, որ սույն բողոքը ստանալուց հետո Դիտորդ մարմնի միջամտության արդյունքում «Առավոտ» օրաթերթն անմիջապես հեռացրել է վիճարկվող արտահայտությունը իր էլեկտրոնային կայքից, վկայում է, որ օրաթերթը գիտակցել է այդ արտահայտության անցանկալի լինելը: Հիմք ընդունելով այս հանգամանքը, ինչպես նաև վերոնշյալ եզրահանգումները, ցանկալի կլիներ, որ թերթը նաև Նարինե Իսմայիլի հասցեին ներողության տեքստ հրապարակեր, սակայն դա որպես պարտադիր գործողություն չի կարող դիտարկվել:

5. Դիտորդ մարմինը հորդորում է կողմերին հետևել սույն եզրակացության մեջ պարունակվող մոտեցումներին և զերծ մնալ վեճը դատական կարգով լուծելուց:

Ընդունվել է Զանգվածային լրատվության միջոցների էթիկայի Դիտորդ մարմնի 2013 թ. մայիսի 8-ի նիստում,
որին մասնակցել է ***Ռուսաստանի մամուլի բողոքների հանրային կոլեգիայի համանախագահ Յուրի Կազակովը և ԴՄ-ն հետևյալ կազմով՝***

Գեղամ Մանուկյան, «Երկիր մեդիա» հեռուստաընկերության տեղեկատվական և հասարակական-քաղաքական հաղորդումների տնօրեն
Գնել Նալբանդյան, «Արմնյուս» հեռուստաընկերության գլխավոր խմբագիր
Նունե Սարգսյան, Մամուլի աջակցության «Ինտերնյուս» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն
Մեսրոպ Մովսեսյան, «Ա1+» հեռուստաընկերության տնօրեն
Աշոտ Մելիքյան, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ
Բորիս Նավասարդյան, Երևանի մամուլի ակումբի նախագահ
Էմանուիլ Մկրտչյան, «Արմինֆո» լրատվական գործակալության տնօրեն
Արա Ղազարյան, իրավաբան
Գեղամ Բաղդասարյան, «Անալիտիկոն» հանդեսի գլխավոր խմբագիր

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձևավորվել է ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների կողմից, որոնք այս պահին թվով 48-ն են: ԴՄ-ն իր եզրակացություններում ղեկավարվում է Ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների վարքականոնով, որն ընդունվել է ինքնակարգավորման մարմնի 2007 թվականի մարտի 10-ի ժողովում: